# 621

Միայն Մեկը կա, որ արժանի է
Փառքը, պատիվը, զորությունն ստանալու:
Աստված անտես, բայց իրական,
Զարմանալի ու աննման,
Նրան միայն ես կփառաբանեմ:
Ո՜վ Տեր Հիսուս, Քեզ սրտովս կփառաբանեմ,
Ո՜վ Տեր Հիսուս, Քեզ հոգովս կփառաբանեմ:
Աթոռիդ առջև ես կերկրպագեմ
Ու ամբողջ իմ կյանքը Քեզ կնվիրեմ: (2)

***
Տեսնում եմ Քեզ, տեսնում եմ Քեզ,
Մեծարված ես, Տե՛ր Բարձրյալ, սուրբերիդ գովասանքով:
Տեսնում եմ Քեզ, տեսնում եմ Քեզ,
Տեսնում եմ Քեզ, ո՛վ իմ Արքա՝
Մեծարված գահի վրա,
Դու տիրում ես հավիտյան: (2)

Փառքն է Նրա լցնում տաճարը,
Երկնքում երկրպագում են Նրան գահի առջև,
Միացի՛ր նրանց և գոչի՛ր, որ սուրբ է Տերը մեր,
Սուրբ է Տերը, մեր Տերը: